ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԱՐՏԱԲՈՒՅՆՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՍՈՑԻԱԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմեց համայնքի ղեկավար Ս. Սեդրակյան

Քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու նիստում 30.01.2012 թիվ 4 արձանագրության 16 որոշմամբ
/ նիստի ամսաթիվը /

ԱՐՏԱԲՈՒՅՆՔ 2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է քառամյա ծրագիրը

1. Համայնքի իրավիճակի վերլուծություն և գնահատում:
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները:
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների վերլուծություն, գնահատում և կանխատեսում:
5. Համայնքի ոլորտային կապիտալ ծրագրերի ձևակերպում և ամփոփում:
6. Համայնքի քառամյա զարգացման ծրագրի հիմնական ցուցանիշները:

Հավելված 1. Համայնքի ղեկավարի աշխատակազմի ու ենթակա կազմակերպությունների կառուցվածքը:

Հավելված 2. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը:

Ի՞ՆՉ Է ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի քառամյա զարգացման ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Աշխարհագրական դիրքը, պատմական ակնարկ

Արտաբույնք գյուղը վերաբնակեցվել է 1828թ. մարտ ամսից: Գյուղն ավելի հին է, քան ենթադրվում է, որի վկայությունն է գյուղի կենտրոնում կառուցված, մոխրագույն տուֆից կերտած, գորգագործի հմտությամբ զարդաքանդակներով, խաչքարերով ու սրբատաշ պատերով 13-րդ դարի կիսավեր Սմբատաբերդ ամրոցը և Ցախաց քար եկեղեցու համալիրը:

Այն գտնվում է ծովի մակերևույթից 1650մ բարձրության վրա: Գյուղից վերև Մեղրաքարն է, իր բարձր գագաթներով, լանջերով ու սառնորակ աղբյուրներով, որի շնորհիվ խմելու ջրով համայնքն ապահովված է 85%-ով: Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Հաճախակի են չորային և երաշտի տարիները, որից շատ է տուժում գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացին:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղն ունի 1142 բնակիչ: Տղամարդիկ կազմում են բնակչության 49%: Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է.

1. Երեխաներ /0-5 տ./	78, որից՝	տղա - 33,	աղջիկ- 45
2. դպրոցական / 6-18 տ./	221, որից՝	տղա - 120,	աղջիկ - 101
3. 19-62 տարեկան	697, որից՝	տղա - 347,	աղջիկ - 350
4. թոշակառուներ	248		
5. հաշմանդամներ	46		
6. աշխատունակ	660		

Գյուղն ունի 431 ծուխ, որից 52 ընդգրկված է «Փարոս» համակարգում:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Գյուղը ղեկավարվում է համայնքի ղեկավարի /գյուղապետի/ կողմից, որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ: Գյուղապետարանն ստեղծվել է աշխատակազմի հետևյալ կառուցվածքով՝

- Աշխատակազմի քարտուղար 1 դրույք
- Տեղակալ 1 դրույք
- Հաշվապահ 1 դրույք
- Ֆինանսիստ 1 դրույք
- Օպերատոր 1 դրույք
- Խմելու ջիր հսկիչ 1 դրույք
- Խմելու ջիր հսկիչ 1 դրույք
- Հավաքարար 1 դրույք

Համայնքի ենթակառույցներն են՝

Մշակույթի տուն

•տնօրեն 1 դրույք

•գեղմասվար 1 դրույք

•կազմակերպիչ 1 դրույք

Գրադարան

•Գրադարանի վարիչ 1 դրույք

Աշխատակազմի ու ենթակառույցների ամբողջ ապարատը բաղկացած է 13 հոգուց:
Համայնքի ղեկավարի աշխատակազմի ու ենթակառույցների կառուցվածքը պատկերված է հավելված 1-ում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997թ.-ի թիվ51 որոշմամբ հետևյալ կազմով:

- գրադարան 1 միավոր
- մշակույթի տուն 1 միավոր - 0,032 հա
- բուժկետ 1
- գերեզմանոց 4 հատ – 1,668 հա
- վարչական շենք 1 միավոր – 0.0174 հա
- ջրմուղի ցանց 1 միավոր – 13 կմ
- ոռոգման ցանց 1 միավոր – 70 կմ
- ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ 7 կմ
- ներհամայնքային կամուրջներ 14 հատ
- դաշտամիջյան ճանապարհներ 90 կմ

Տնտեսական անկման հետևանքով համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացավ:
Պահեստամասեր ու քսայուղեր չլինելու հետևանքով անմխիթար վիճակում են գյուղտեխնիկան ու գործիքները:
Խմելու ջրի ներհամայնքային ցանցը կառուցվել է 1969թ.-ին, որի մաշվածությունն այնքան մեծ է, որ ջրի կորուստը հասնում է 35% - ի: Անձրևաջրերն ու կեղտաջրերը հաճախ ներթափանցում են խմելու ջրի ցանց, որը վտանգավոր է դարձնում ջրի օգտագործումը:
Ճանապարհային ցանցը վերանորոգման կարիք ունի: Ներկայումս անհրաժեշտ է վերանորոգել 12 կմ ճանապարհ և փողոցներ:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղբահանությունը կատարվում է անհատական ձևով՝ մոտ 100%-ով:
Չկան խողովակներ ու կիսախողովակներ խմելու ջրի և ոռոգման ներքին ցանցի վերանորոգման համար: Խմելու ջրի մատակարարումը հաճախ կատարվում է ընդհատումներով՝ տնտեսական ճգնաժամի և ջրամատակարարման ցանցի մաշվածության պատճառով:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա 270 առանձնատուն, 16 հազ. քմ տարածքով:Բնակարանով անապահով և կարիքավոր ընտանիքների թիվը 60-ից ավել է, որը տարեցտարի աճում է: Կան բազմաթիվ կիսավթարային շենքեր, որոնք տնտեսական ճգնաժամի պատճառով չեն վերանորոգվում:

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

• Համայնքի վարչական տարածքը	2674 հա, որից
• Վարելահողեր	6,9 հա
• Խոտհարկ	197 հա
• Արոտավայր	372 հա
• Անօգտագործելի հողեր	1655,5 հա
• Ջրեր	64 հա
• Դաշտային ճանապարհներ	2,8 հա
• Գերեզմանոց	1,668 հա
• Տնամերձ հողեր	90 հա
• Դպրոց	1,0
• Գյուղամիջյան փողոցներ	3,0
• Սեփականաշնորհված հողեր	287 հա, որում
Մեկ հողաբաժնի չափը՝	0,59 հա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ոռոգման ջուր չունենալու պատճառով Արտաբույնքի համայնքը դժվարանում է կազմակերպել գյուղ.մթերքների արտադրությունը: Բնակչությունը հիմնականում զբաղվում է կարտոֆիլի, կաղամբի, վարունգի, լոլիկի, պղպեղի և այլ բանջարա-բոստանային կուլտուրաների արտադրությամբ:Այն հիմնականում կախված է բնության քմահաճույքից: Անձրևային տարիներին որոշ չափով կարելի է բերք հավաքել, իսկ երաշտի տարիներին գյուղացին կորցնում է բերքի 80 % - ը:

Անասնապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, ձու, մեղր:

Երաշտի տարիներին անասնապահության բնագավառում նույնպես մեծ դժվարություններ են առաջանում:

Խոտի և խտացված կերի անբավարարվածության պատճառով դժվարանում է անասունների մսուրային շրջանի կազմակերպումը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուղը ունի 1 միջն. դպրոց, որտեղ սովորում է 171 աշակերտ: Դպրոցն ունի 29 աշխատատեղ, մեկ ուսուցչին ընկնում է 7,8 աշակերտ: 2011թ. նոյեմբեր ամսին բացվել է նախակրթարան, որտեղ այժմ կրթվում են 23 երեխաներ:

Անմխիթար է դպրոցի վիճակը և անհապաղ վերանորոգման կարիք ունի:

ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Գյուղը ունի 1 մշակույթի տուն, որը կիսավթարային վիճակում է գտնվում: Այդ պատճառով համայնքը զրկվել է հասարակական միջոցառումներից, կինոյից, թատրոնից: Գործող գրադարանն ունի 9116 անուն գիրք, որի մի մասը գտնվում է ոչ բարվոք վիճակում:

Սպորտ հրապարակ չունենալու պատճառով երիտասարդությունը զրկված է սպորտային միջոցառումներից, ֆուտբոլային խաղերը կազմակերպվում են դպրոցի մարզադաշտում, որը միշտ զբաղեցնում են դպրոցականները:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Գյուղում գործում է մեկ բուժկետ, որը գտնվում է բարեկարգ վիճակում: Բուժկետն ունի մեկ աշխատող:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Գյուղի տարածքում են գտնվում 13-րդ դարում կառուցված «Սմբատաբերդ» ամրոցը և «Ցախաց քար» եկեղեցին, ինչպես նաև պատմամշակութային տարածքներ, որոնք խթան կհանդիսանան տուրիզմի զարգացման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Գյուղի ներքևի նոր թաղամասում էլեկտրական հոսանքով ապահովելու խնդիրը / շուրջ 2 կմ / :
- Գյուղում էլ. հոսանքը իրականացվել է 1965թ. և այժմ էլեկտրասյուները ու լարերը փոխելու ենթակա են:
- Ճանապարհների, խմելու ջրի և ոռոգման ջրի ցանցերի անմխիթար վիճակը:
- Ծնելիության նվազում՝ կապված տնտեսական վիճակի վատթարացման հետ:
- Մեծանում է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը:
- Գործազրկություն:
- Հողերի անջրդիության պատճառով գյուղացու եկամուտների նվազում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Մեծ աշխատուժի առկայություն:
- Մեծ քանակությամբ ջրի ամբարման հնարավորությունը:
- Ուղղակի ընտրություններով համայնքի ղեկավարի ընտրության հնարավորություն:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Խմելու ջրի ներհամայնքային ցանցի վերանորոգման անհրաժեշտությունը :
- Հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները մեծ վտանգ են սպառնում համայնքի բյուջեի կատարմանը:

2.ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ռազմավարությունը

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ- տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ ու ամենաբարեկեցիկ բնակավայրերից մեկը:

Բարեփոխումներ կատարելով, նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.

- Զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը համայնքում:
- Համայնքն ապահովել շուրջօրյա խմելու ջրով:
- Կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը և հանգիստը՝ աշխատանքից ազատ ժամերին:
- Համայնքում ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ երթևեկությունը:

3.ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

ԾՐԱԳԻՐ 1

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Ներածություն

Համայնքի ջրամատակարարման համակարգը վերանորոգվել է 2008թ.: Ջրագծի երկարությունը կազմում է 9 կմ:

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Վերջին տարիների տնտեսական անկման և ֆինանսական սղության պատճառով շարքից դուրս է եկել շուրջ 40 տարվա վաղեմություն ունեցող մաշված ջրագիծը: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ վերանորոգման ենթակա ջրագիծն անցնում է լեռնային տարածքով, որտեղ անձրևաջրերից և գարնան ձնհալից առաջնում են սելավներ ու մեծ վնաս հասցնում խողովակաշարին: Սելավների պատճառով խողովակները ջարդվում են ու փչանում: Համայնքի հրատապ խնդիրներից է խմելու ջրագծի հիմնական վերանորոգումը, և ընդառաջելով բնակչության դիմումներին, սույն ծրագրով առաջարկվում է վերանորոգման ենթարկել համայնքի խմելու ջրամատակարարման ցանցը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

- ապահովել համայնքը շուրջօրյա խմելու ջրով,
- նվազեցնել խողովակների մաշվածությունից առաջացած ջրի կորուստները,
- կանխել կեղտաջրերի ներթափանցը:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

- Հիմնախնդիրը բարձրացնել ՀՀ կառավարության առջև՝ ծրագիրը ֆինանսավորելու և իրագործելու համար:
- Կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը,
- Հայտարարել մրցույթ և որոշել աշխատանքներն իրականացնող կապալառու շին. կազմակերպությունը,
- Ձեռք բերել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ,
- Կազմել ԾԻԳ համայնքի անդամներից՝ կատարվող աշխատանքները վերահսկելու համար:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իրականացնելով այս ծրագիրը, համայնքը 100%-ով կապահովվի շուրջօրյա ջրով, կնվազի խմելու ջրի կորուստները, ներկայիս 35%-ից հասնելով 1-2%-ի, կբարելավվի ազգաբնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Նախնական մոտավոր հաշվարկներով 1,7 կմ երկարությամբ ջրատարի վերանորոգման և վերակառուցման աշխատանքների արժեքը կկազմի մոտ 30 մլն ՀՀ դրամ:

գյուղամիջյան 4 փողոցները: Բնակչության դիմումներին ընդառաջելով, սույն ծրագրով առաջարկվում է ասֆալտապատել գյուղամիջյան 4 փողոցները ու բարեկարգել մյուս փողոցները:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

	ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Չափի միավոր	2012թ. փաստ	2013թ. փաստ	2014թ. փաստ	2015թ. կանխ	2016թ. կանխ
1.	Համայնքի տարածքը	հա	2674	2674	2674	2674	2674
2.	Բնակչության թիվը	մարդ	1142				
3.	Ծնունդը	մարդ	4				
4.	Մահացությունը	մարդ	12				
5.	Աշխ. ռեսուրսները, այդ թվում՝	մարդ	660				
	ա/ զբաղված. ըստ տնտ. ճյուղերի	մարդ					
6.	Գործազուրկներ		600				
7.	Առևտրի և հաս. սննդի օբյեկտներ	հատ	5				
8.	Պահուստային հողեր	հա					
9.	Պահուստային հողերի օգտագործման մակարդակը	%					
10.	Խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկարությունը	կմ	6				
11.	Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը	կմ	13				
12.	Ոռոգման համակարգում ընկած հողերը	կմ	90				
13.	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	8				
14.	Չբարեկարգված փողոցների ու ճանապարհների երկարությունը	կմ	6				
15.	Մասնավոր բնակ. ֆոնդը	հազ. քմ					
16.	Բնակկարիքավոր ընտանիքների թիվը	հատ	170				
17.	Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	1/օր	0,40				
18.	Ջրի կորուստները ցանցում	%	20				
19.	Սովորողների թիվը հանրակրթ. դպրոցում	մարդ	171				
20.	Երեխաներ՝ նախակրթարանում	մարդ	23				
21.	Գյուղապետարանի և ենթակառուցվածքների թիվը	մարդ	13				

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1.Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը 431, այդ թվում

ա/ անհատական տնտեսություն 431

2.Գյուղ. արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը g

ա/ կարտոֆիլ	300
բ/ բանջարաբոստանային կուլտուրաներ	200
գ/ կաթ	3200
դ/ միս	400
ե/ բուրդ	
զ/ ձու	125000
է/ մեղր	120

3.Ցանքատարածությունները

ա/ հացահատիկ

բ/ կարտոֆիլ

գ/ բանջարբոստանային

դ/ կաղամբ

ե/ առվույտ

զ/ կորնգան

4.Անասնագլխաքանակը

ա/ խոշոր եղջերավոր անասուն	724 գլուխ
այդ թվում կովեր	249
բ/ մանր եղջ. անասուն	39
այդ թվում մայրեր	17
գ/ թռչուններ	1297 թև
այդ թվում հավեր	1255
դ/ մեղվաընտանիքներ	255
ե/ խոզեր	8
այդ թվում մայրեր	6

5. Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների քանակը. հատ

ա/ մասնավոր սեփականություն

- բեռն. ավտո. կարբեր մակնիշի 20
- անվավոր տրակտոր 1
- հացահատիկային կոմբայն
- տրակտորային կցասայլեր

Հավելված 1

ԱՐՏԱԲՈՒՅՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



Հավելված 2

ԱՐՏԱԲՈՒՅՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ

ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ

1. Գյուղապետարանի շենք	1
2. Մշակույթի տուն	1
3. Գրադարան	1
4. Խմելու ջրի ներտնտեսային համակարգ	1
5. Ներտնտեսային ոռոգման ջրի համակարգ	3-70 կմ
6. Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ	- - 1 ճան., 22 փողոց – 8 կմ
7. Դաշտամիջյան ճանապարհներ	60 կմ
8. Ներհամայնքային կամուրջներ	14
9. Հուշարձան	1
10. Գյուղ. տեխնիկա	-
11. Գերեզմանատուն	4 /1,668 հա/